ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 190

<<16>> հունիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ՄԱՅԻՍՅԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-077-0030-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 0.01831 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի>> 2-րդ և 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը հաստատելու մասին>> N 757-Ն որոշմամբ հաստատված <<Հասարակական նպատակային նշանակության շենքերի, շինությունների դասակարգման>> ցանկի դրույթներով **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի (բնակավայր Մայիսյան) 08-077-0030-0014 կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային

նշանակության, 0.01831 հեկտար հողամասի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը փոխել հասարակական գործառնական նշանակության:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի (բնակավայր Մայիսյան) 08-077-0030-0014 կադաստրային ծածկագրից 0.01831 հեկտար հողամասում ինքնակամ կառուցված 86.75 քառակուսի մետր արտաքին մակերեսով կուլտուրայի տունը ճանաչել օրինական և համարել Մարմաշեն համայնքի սեփականությունը:

3. Որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևի համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում է որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

16.հունիսի.2020 թվական
Գյուղ Մայիսյան